

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՏՈՐԱԳՐՈՒԿՑԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ #

ք. Երևան

«\_\_\_» \_\_\_\_\_ թ.

«Էլեկտրոնային Կառավարման Ենթակառուցվածքների Ներդրման Գրասենյակ» ԲԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Արթուր Ղուլյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մի կողմից, և -----/կազմակերպությունը/ ի դեմս -----, (Պետական գրանցման համարը), որը գործում է իր Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մյուս կողմից

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է Գնորդին ի սեփականություն հանձնել լազերային սկավառակ (այսուհետ՝ էլեկտրոնային կրիչ), իսկ Գնորդը պարտավորվում է վճարել դրա համար և այն օգտագործել իր կանոնադրական նպատակների համար:

#### Էլեկտրոնային կրիչը պարունակում է՝

1.1.1 Գնորդի կողմից ներկայացված ֆիզիկական անձի համար՝ անձը հաստատող տվյալները էլեկտրոնային (PDF) ֆայլով ստորագրված ֆիզիկական անձի էլեկտրոնային ստորագրությամբ՝ (որը պարունակում է Գնորդի բաց բանալին) վավերացված Վաճառողի էլեկտրոնային ստորագրությամբ: Ֆիզիկական անձի տվյալները տրամադրվում են Գնորդի կողմից Վաճառողին սույն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող տեղեկանքով:

1.1.2 CoSign ծրագրի Կլիենտային տեղադրման ծրագրային ապահովումը (այսուհետ՝ Ծրագիր) և օգտագործողի էլեկտրոնային ձեռնարկը:

1.2. Ծրագրի էլեկտրոնային կրիչի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը չի ենթադրում ծրագրի նկատմամբ հեղինակային իրավունքների փոխանցում:

1.3. Ծրագրի սեփականության իրավունքը փոխանցվում է Գնորդին՝ ֆիզիկական անձի կողմից այն օգտագործելու նպատակով:

1.4. Ծրագիրն ընդունելու արդյունքում կողմերը կազմում և ստորագրում են ապրանքի ընդունման-հանձնման ակտ, որում նշվում է ծրագրի՝

ա) անվանումը,

- բ) քանակը,
- գ) որակը,
- դ) հայտնաբերված թերությունները.

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

### 2.1. Վաճառողն իրավունք ունի՝

- 2.1.1. պահանջել Գնորդից վճարելու ծրագրի ամբողջ գումարը և սույն պայմանագրով սահմանված տուժանքը, եթե Գնորդը ժամանակին չի վճարել սույն պայմանագրին համապատասխան հանձնված ծրագրի համար:
- 2.1.2. հրաժարվել պայմանագիրը կատարելուց, եթե Գնորդը սույն պայմանագրի խախտմամբ հրաժարվում է ապրանքն ընդունել և դրա համար վճարել:
- 2.1.3. կասեցնել իր կողմից տրամադրված ստորագրությունների Գնորդի կողմից օգտագործումը, եթե ծրագիրը Գնորդի կողմից չի օգտագործվում դրա ձեռքբերման նպատակների համար:

### 2.2. Վաճառողը պարտավոր է՝

- 2.2.1. Գնորդի կողմից սույն պայմանագրին ծանոթանալու և այն ստորագրելու պահից Գնորդին հանձնել թիվ 1.1.1. և 1.1.2. կետերում նշված ծրագիրը՝ բացառությամբ ծրագրի օգտագործողի անունից և գաղտնաբառից (username & password):
- 2.2.2. Հանձնել Գնորդին ծրագրի օգտագործողի անունն ու գաղտնաբառը վճարումը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ տեղում վճարելու դեպքում՝ Էլեկտրոնային կրիչի հետ միասին:
- 2.2.3. Ծրագիրը հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերվող փաստաթղթերը:
- 2.2.4. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ծրագիր:
- 2.2.5. Գնորդին հանձնել սույն պայմանագրով սահմանված բաղադրիչներով, չափանիշներով ծրագիր:
- 2.2.6. Գնորդին հանձնել ծրագիր, որը հնարավոր լինի օգտագործել ըստ նշանակության մինչև վավերականության ժամկետի ավարտը:
- 2.2.7. Սույն պայմանագրի գործողության ընթացքում մատուցել սպասարկման ծառայություններ ծրագրի շահագործման վերաբերյալ:
- 2.2.8. Ծրագիրը Գնորդին հանձնել պատշաճ փաթեթավորմամբ:
- 2.2.9. Պահպանել Էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման եւ ստուգման միջոցների, ինչպես նաև այդ միջոցների փաստաթղթերի նմուշները
- 2.2.10. Ժամանակավորապես կասեցնել կամ դադարեցնել Էլեկտրոնային ստորագրության կիրառման հնարավորությունը, եթե Էլեկտրոնային ստորագրության ստեղծման, օգտագործման և/կամ ստուգման միջոցներում հայտնաբերվել են այնպիսի թերություններ կամ

շեղումներ, որոնք կարող են վտանգել Էլեկտրոնային ստորագրության պաշտպանվածությունը:

### 2.3. Գնորդն իրավունք ունի՝

2.3.1. հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե Վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված ծրագիրը:

2.3.2. հրաժարվել ծրագրից՝ ապրանքի պատկանելիքները և փաստաթղթերը սույն պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չհանձնելու դեպքում:

2.3.3. պահանջել լրացնելու ծրագրի պակաս հանձնված մասը կամ հրաժարվել հանձնված ծրագրից կամ դրա համար վճարելուց, իսկ եթե ծրագրի համար արդեն վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը, եթե Վաճառողը հանձնել է սույն պայմանագրով չնախատեսված ծրագիր:

2.3.4. եթե հանձնվել է սույն պայմանագրի (այդ թվում թիվ 1.1.1. և 1.1.2. կետերում) պահանջներին չհամապատասխանող ծրագիր, իր ընտրությամբ պահանջել՝

ա) թիվ 1.1.1. և 1.1.2. կետերում սահմանված պահանջներին չհամապատասխանող ծրագրի փոխարինում սույն պայմանագրով նախատեսված համապատասխան ծրագրով:

բ) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու թերությունները:

2.3.5. ծրագրի որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում (չվերացվող թերություններ, ինչպես նաև այնպիսի թերություններ, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս և կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո և նման բնույթի այլ թերություններ), իր ընտրությամբ՝

ա) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծրագրի համար վճարված գումարը:

բ) պահանջել փոխարինելու անպատշաճ որակի ծրագիրը սույն պայմանագրին համապատասխանող ծրագրով:

2.3.6. Ակտում արձանագրված թերությունների դեպքում պահանջել Վաճառողից առանց Ծրագրին վնաս պատճառելու տեղում փոխարինել այն:

### 2.4. Գնորդը պարտավոր է՝

2.4.1. ընդունել Էլեկտրոնային կրիչը, վճարել դրա համար և հավաստել, որ ծանոթ է «Էլեկտրոնային փաստաթղթի և Էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին, համաձայն որի՝ Էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված Էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը:

2.4.2. Սույն պայմանագրի պահանջներին համապատասխանող ծրագրին ընդունելու դեպքում՝ դրա համար վճարել Վաճառողին 3-րդ կետում սահմանված գինը և նույն կետով սահմանված կարգով:

- 2.4.3. Ծրագիրը Վաճառողից ընդունելու ժամանակ ստուգել ծրագրի անվանման, քանակի և որակի համապատասխանությունը թիվ 1.1.1. և 1.1.2. կետերին:
- 2.4.4. օրվա ընթացքում Վաճառողին ծանուցել ծրագրի քանակի, բաղադրիչների, որակի, կոմպլեկտացնության, փաթեթավորման վերաբերյալ սույն պայմանագրի պայմաններին անհամապատասխանության մասին:
- 2.4.5. ծրագիրն օգտագործել Վաճառողի կողմից սահմանված կիրառման ու օգտագործման կարգին և տեխնիկական պայմաններին համապատասխան: Վաճառողը չի կարող ենթարկվել պատասխանատվության, եթե Գնորդը սույն պայմանագրի (այդ թվում թիվ 1.1.1. և 1.1.2. կետերի) պահանջներին համապատասխանող ծրագիրն օգտագործել է Վաճառողի կողմից սահմանված կիրառման ու օգտագործման կարգի և պայմանների խախտմամբ:
- 2.4.6. Ծրագիրը օգտագործել դրա ձեռքբերման նպատակների համար:
- 2.4.7. Էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառող ֆիզիկական անձը օգտագործում է միայն Գնորդի կողմից ստորագրությունը ձեռք բերելու նպատակներին համապատասխան և Գնորդի հետ աշխատանքային պայմանագրի ժամկետով ու սահմանված պայմաններով:
- 2.4.8. Էլեկտրոնային թվային ստորագրությունները տրամադրվում են Գնորդի հետ աշխատանքային պայմանագիր ունեցող անձանց՝ ըստ Գնորդի կողմից Վաճառողին ներկայացված հայտի: Սույն կետում նշված հայտին կցվում են նաև տվյալ անձանց անձնագրերի, սոցիալական քարտերի ընթեռնելի պատճենները և ձեռագիր ստորագրության օրինակը՝ թղթային կրիչի վրա:

### 3. Գինը և վճարման կարգը

- 3.1. Սույն պայմանագրի արժեքը կազմում է 15 000 ( տասնհինգ հազար ) ՀՀ դրամ, որը Գնորդը պետք է վճարի Վաճառողին փոխանցումով կամ Էլեկտրոնային քարտի միջոցով (ArCa, Visa, MasterCard)՝ սույն պայմանագիրը ստորագրելու պահից 2 /երկու/ աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.2. Պայմանագրի գումարը վճարվում է Ծրագրի ձեռքբերման առաջին տարվա համար, իսկ հաջորդ տարիներին Վաճառողի կողմից Ծրագրի սպասարկման համար Գնորդը վճարում է տարեկան 5.000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

### 4. Կողմերի պատասխանատվությունը

- 4.1. Կողմերը պարտավորությունների կատարման կետանցի դեպքում վճարում են կետանցի յուրաքանչյուր օրվա համար տուժանք՝ ծրագրի գնի 0.5 տոկոսի չափով:
- 4.2. Կողմերը սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում, իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ - ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. Այլ պայմաններ

- 6.1. Սույն պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:
- 6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ նախազգուշացնելով:
- 6.3. Սույն պայմանագրում կողմերից յուրաքանչյուրը կարող է մյուս կողմին առաջարկել կատարելու փոփոխություն և/կամ լրացում, որոնք կձևակերպվեն գրավոր՝ լրացուցիչ պայմանագիր կնքելու միջոցով:
- 6.4. Սույն պայմանագրի շուրջ ծագող վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 6.5. Սույն պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից՝ հայերեն լեզվով, երկու օրինակներն էլ հավասարազոր են: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<u>«ՎԱԾԱՌՈՂ»</u>	<u>«ԳՆՈՐԴ»</u>
«ԷԼ ԵԿՏՐՈՆԱՑԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՑԱԿ» ԲԲԸ	Կազմակերպության անունը
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5	Հասցե՝
Հ/Հ 15700 04596000100	Հ/Հ
Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ	Բանկ՝
ՀՎՀՀ՝ 02707093	ՀՎՀՀ՝

Կ. Տ.

ստորագրություն /կնիք/